

Վարկառուի կողմից իր պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում տույժերի չափը, կիրառման դեպքերը և վարկի վաղաժամկետ մարման հնարավոր դեպքերն ու պայմանները, ներառյալ նաև հնարավոր անբարենպաստ հետևանքները

1. Վարկառուի կողմից պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում կրում է պատասխանատվություն: Պատասխանատվության ձևերն են՝

- ա) վարկի գումարի ու հասանելիք տոկոսների վաղաժամկետ վճարում,
- բ) տուժանք:

2. Տուժանքի դեպքում վարկառուն պարտավորվում է վճարել 5 կետով սահմանված չափի տուժանք՝ հաշվարկված չկատարված դրամային պարտավորությունների նկատմամբ:

3. Վարկառուի կողմից պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում Բանկը իրավունք է ստանում պահանջել վարկի գումարի ու հասանելիք տոկոսների վաղաժամկետ վճարում:

4. Վարկի գումարի ու հասանելիք տոկոսների վաղաժամկետ վճարման պահանջը ներկայացնելու պահից վարկառուն պարտավորվում է վճարել 5-րդ կետով սահմանված չափի տուժանք՝ հաշվարկված Բանկի հանդեպ առկա ամբողջ դրամային պարտավորությունների նկատմամբ:

5. Տուժանքը սահմանվում է 0.12 տոկոսի չափով յուրաքանչյուր օրվա համար:

6. Տուժանքի հաշվարկման պահից սկսած, այն գումարի վրա, որի նկատմամբ հաշվարկվում է տուժանք, պայմանագրով սահմանված տոկոսների հաշվարկը դադարում է:

7. Վարկը կարող է վարկառուի կողմից վաղաժամկետ մարվել: Այդ դեպքում վարկառուն վճարում է վարկի փաստացի ժամկետի համար հաշվարկված տոկոսները և չի պարտավորվում վճարել որևէ տույժ: Սակայն վարկը տրամադելու օրվանից երեք ամսվա ընթացքում ժամկետից շուտ մարելու դեպքում վարկառուն պարտավորվում է վճարել երեք ամսվա տոկոսագումար: Բացառություն են կազմում հարյուր հազար դրամը գերազանցող և տասը միլիոն դրամը չգերազանցող սպառողական վարկի պայմանագրերը, որոնց դեպքում վարկառուն չի պարտավորվում վճարել որևէ լրացուցիչ տոկոսագումար՝ անկախ նրանից, թե երբ է կատարվել վաղաժամկետ մարումը: